ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Հետազոտության և պրեզենտացիայի միջոցով ձևավորող գնահատումը ռուսաց լեզվի 8- րդ դասարանում:

Հետազոտող ուսուցիչ՝ Մ. Աղայան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1.Նախաբան ………………………………………………………………..…………3

2.Հետազոտության ընթացքը…….…………………………………….…………......6

3.Եզրակացություն……………………………………………………………………11

4.Գրականության ցանկ……………………………………………………………15

## Նախաբան

Դասապրոցեսը հետաքրքիր կազմակերպելու համար հաճախ պետք է օգտագործել տարբեր մեթոդներ և հնարներ:

Տվյալ աշխատանքի համար որոշվեց հետազոտել պրեզենտացիայի միջոցով ձևավորող գնահատման հնարը:

Գոյություն ունի ձևավորող գնահատման 9 հնար՝

Ձևավորող գնահատման նպատակը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա: Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի և սովորողների առջև դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով:

Առանց հայտորոշման ուսուցիչները չեն կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատումը, իսկ ձևավորող գնահատման որակն իր հերթին ազդում է միավորային գնահատման արդյունքների վրա: Պահպանելով գնահատման իրականացման հետևողականությունը՝ կարելի է հասնել ուսումնառության արդյունքների բարձր մակարդակի:

Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում (Գծակարգ):

· Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:

· Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:

· Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:

· Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:

·	Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում:

Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է՝ ուսուցիչը և սովորողները կարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած՝ ազդեցություն ունենալ ուսուցման և առհասարակ կրթության որակի բարելավման վրա: Ձևավորող գնահատումը կիրառվում է թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի համար ընդունելի հնարներով:

Ուսուցման գործընթացում գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է (ոչ թե սովորողը), որն ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր ձևերի ու տեսակների հիմքը ուսուցման նպատակի ձևակերպումն է:

Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ ուսուցչի և՛ սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.

·	Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:

·	Ինչպե՞ս կարող եմ ստուգել:

·	Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:

·	Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Գոյություն ունեն սովորողների ակտիվության մի քանի ուղղություններ.

ուսուցման նպատակների և արդյունքների ընկալում,

սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում,

ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում:

Դասի նպատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործուն մասնակիցը: Վերջնարդյունքները ևս պետք է

հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառու ներկայացված լինեն (գրատախտակին, պաստառին, էկրանին և այլն), որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

## Հետազոտության ընթացքը

Արժեքային համակարգ ձևավորելու և դասապրոցեսը հարստացնելու նպատակով դասապրոցեսի ժամանակ կարևոր է արժևորել յուրաքանչյուր երեխայի խոսքը և կարծիքը:

Պրեզենտացիան օգնում է սովորողներին ընտրել ճիշտ ճանաչողական գործիք և ուսումնառությունը դարձնել առավել արդյունավետ:

Իսկ ուսումնասիրությունները ցույց են տվել,որ պրեզենտացիաները էապես բարելավում են սովորողների ուսումնառության արդյունքները:

Սովորողների ստեղծագործական հաջող զարգացման համար կրթական գործընթացի հիմնական բաղադրիչը մանկավարժական աջակցությունն է, կարելի է

ասել, որ մանկավարժական աջակցության գործընթացում ուսուցիչը օգնում է երեխային զգալ իր անկախությունը, պահպանել ինքնուրույնությունը: Ուսուցիչը պետք է վստահության զգացում առաջացնի յուրաքանչյուր աշակերտի մոտ: Դա անելու համար ուսուցիչը պետք է հասկանա և ճանաչի երեխայի անհրաժեշտությունն ու յուրահատկությունը, ներկայացնի նրա անհատական հոգեբանական դիմանկարը, իմանա տարիքային առանձնահատկությունները, աշակերտի վարքագիծը որոշող գերիշխող դրդապատճառները, սովորելու նկատմամբ վերաբերմունքը և մեծահասակների և հասակակիցների հետ փոխազդեցությունը: Դասընթացը պետք է համապատասխանի կրթական ծրագրի և երեխայի կյանքի այս փուլում սոցիալական և անձնական զարգացման խնդիրների

միջև: Ստեղծագործական դաս, ինչպես գրում է Ա.Վ. Խուտորսկոյը: - սա

բազմակողմանի բյուրեղ է, որն արտացոլում է ուսուցիչների վերապատրաստման ամբողջ համակարգը: Դասի պլանը ներառում է ուսումնական ծրագրի կառուցվածքային տարրերը `իմաստը, նպատակները, խնդիրները, հիմնարար կրթական առարկաներն ու խնդիրները, սովորողների գործունեությունը, ակնկալվող արդյունքները:

Ժամանակակից աշխարհում, դպրոցում՝ դասապրոցեսի ընթացքում սովորողներին զուտ առարկայական գիտելիքներ փոխանցելը բավարար չէ հասարակության լիարժեք ինքնուրույն և նախաձեռնող անհատ ձևավորելու համար: Մեզ արդեն հայտնի, է որ երեխայի որպես անհատականություն ձևավորելու գործընթացը տեղի է ունենում դպրոցի, ընտանիքի և հասարակության շնորհիվ: Իր առանձնահատուկ դերը և նշանակությունը ունի դպրոցը երեխայի մտավոր և բարոյական արժեքների ձևավորման գործընթացում: Սկսած կրտսեր դպրոցական տարիներից ուսուցչի ստեղծագործական մոտեցումը դասաժամի ընթացքում դասապրոցեսը աշակերտի համար դարձնում է ավելի հետաքրքիր, իսկ տվյալ դասի թեման ընկալվում է շատ ավելի հեշտ և արագ քան միայն բանավոր ներկայացման միջոցով: Հենց նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում է դրվում անհատականության ձևավորման հիմքը, ինչը իր շարունակությունն է գտնում միջին և ավագ դպրոցական տարիքում: Եվ յուրաքնչյուր առարկայի ուսուցումը պետք է համապատասխանի ժամանակակից սովորողի պահանջներին: Այլապես այդ առարկան աշակերտների համար կընկալվի որպես բարդ և անհետաքրքիր: Աշակերտը պետք է մոտիվացիա ունենա դպրոց հաճախելու, գիտելիքներ ստանալու և նոր կարողություններ ձեռք բերելու համար: Սակայն ուսուցիչը հենց ինքը պետք է լինի մոտիվացված, ստեղծագործ, նորարար, որպեսզի օրինակ ծառայի աշակերտների համար: Դպրոցը չպետք է կաղապարի և ճնշի աշակերտի ինքնուրույնությունը և անհատականությունը այլ հակառակը պետք է օգնի սովորողի ինքնաճանաչմանը և անհատականության կայացմանը: Դպրոցը պետք է ձևավորի ուժեղ, ինքնավստահ, գիտելիքներով և կարողություններով զինված անհատ: Չէ որ այսօրվա աշակերտական նստարանին նստած երեխան ապագայի քաղաքացին է: Մենք ինքներս էլ կարող ենք բերել շատ օրինակներ, երբ շատ խելացի և գերազանց գնահատականներով դպրոցը

ավարտած աշակերտը չի կարողանում կայանալ իր մասնագիտության մեջ և որպես անհատ հասարակության մեջ: Այսպիսի դեպքերում կրթական գործընթացը կարելի է համարել ձախողված: Կրթությունը գիտելիք, կարողություն, հմտություն, ստեղծագործական ունակություն, նախաձեռնողականություն, պատասխանատվություն օղակներից բաղկացած շղթա է և եթե այդ օղակներից մեկը բացակայում է՝ շղթան դադարում է գոյություն ունենալ: Ստեղծագործելու ունակությունը կարելի է բնութագրեր որպես գործունեություն որի արդյունքում ստեղծվում է մի նոր բան որը բնութագրում է նոր ու անսպասելի կողմից և ն թույլ է տալիս յուրացնել նոր գիտելիքներ և կիրառել ավելի վաղ ձեռքբերվածը: Ստեղծագործելու ունակությունը բնորոշել երեխաների սակայն միշտ խրախուսելով, որը կօգնի ապագայում սովորողի սոցիալականացմանը: Ժամանակակից կրթության ռազմավարություններից է հնարավորություն տալ սովորողի ցույց տալ իր տաղանդները ու ստեղծագործելու ողջ ներուժը: Կրթության հիմնական նպատակը երիտասարդ սերնդին ապագային նախապատրաստելն է: Ստեղծագործությունն այն ուղին է, որը կարող է արդյունավետ կերպով իրականացնել այս նպատակը: Ստեղծագործ անձի կրթության իտեգրված մոտեցումը ներառում է ընդհանուր գեղագիտական և բարոյական դաստիարակության խնդիրներին վերաբերող հարցերի լայն շրջանակ: Գաղափարական, աշխարհայացքային, հոգևոր և գեղարվեստական անքակտելի միասնությունը էական պայման է աճող անձի անձի, դրա զարգացման բազմակողմանի և ներդաշնակության համար:

Ինչ է կոնֆլիկտը:

Դա հակադիր շահերի, հայացքների, ձգտումների բախում, ընդհարում, պայքարի հասցնող տարաձայնություն, սուր վեճ:

Գեղարվեստական ստեղծագործության մեջ պատկերված գործող ուժերի՝ կերպարի ու հանգամանքների, մի քանի կերպարների կամ կերպարի տարբեր կողմերի միջև եղած հակամարտությունը, հակասությունը: Լինելով զարգացող գործողության հիմքը, կոնֆլիկտ նրա ընթացքին համեմատ անընդհատ փոխակերպվում է,

գնալով դեպի կուլմինացիա և հանգուցալուծում: Այսպիսով ստեղծագործության համար ապահովվում է ներքին դիալեկտիկական միասնությունն ու ամբողջականությունը: Կյանքի հակադիր ուժերի մշտական պայքարը դրսևորվում է բազմազան ձևերով՝ սոցիալ-քաղաքական ուժերի անհաշտ հակադրությունից (կոլիզիա) մինչև անձնական շահերի բախում (ինտրիգ):

Կոնֆլիկտների միջոցով դասապրոցես անցկացնելը շատ արդյունավետ միջոց է:

Սակայն պետք չէ մոռանալ այն փաստը, որ յուրաքանչյուր աշակերտ ունի իր սեփական տարբերեկը և տեսանկյունը, որին պետք է մոտենալ նրբանկատ:

Հարց ու պատասխանի միջոցով պետք է լսելի դարձնել յուրաքանչյուրին:

Մարդկությունը իր ամբողջ կյանքի ընթացքում չի կարողացել զերծ մնալ կոնֆլիկտներից սկսած չնչին վեճերից  հասնելով պատերազմների:

Միթե սա մարդկային կյանքի անբաժան մասնիկն է համարվում:

Կոնֆլիկտի դրդապատճառ կարող է հանդիսանալ անհամաձայնեցումը:

Դասապրոցեսի ընթացքում կոնֆլիկտի մեջ գտնվող աշակերտներին առաջարկվեց վերցնել  մեկական թերթիկ, կիսել այն 4 մասի: Յուրաքանչյուր թերթիկի անկյունում գրել 1,2,3,4, թվերը:

Այնուհետև յուրաքանչյուրն 1-ին թերթիկի վրա գրեն իրենց բնութագրող 5 լավագույն բառ, որը իրենք համարում են դրական:

3_րդ համարի թերթիկում գրում են 5 իրենց նկարագրող բառ, որը համարում են բացասական:

Հիմա դրանք վերաձևակերպեք այնպես, որ բացասականները դառնան դրական:

Այդ փոփոխված հատկանիշները հրաշալի մարդ եք դու հգրեք 2-րդ համարի թերթիկում:

Հիմա պատկերացրեք, որ ձեզ ինչ որ մեկը շատ է սիրում և ձեր դրական հատկանիշները ընդունում է որպես բացասական: Նայեք այն հատկանիշներին, որոնք գրված են 1-ին թերթիկում: Փորձեք դրանք վերափոխել վատի ձեր թշնամու տեսանկյունից և գրի առեք 4-րդ թերթիկում:

Այնուհետև ձեռքի ափով փակեք 3-րդ և 4-րդ թերթիկները: Նայեք 1-ին և 2-րդ թերթիկներին: Տեսնում եք ինչ հրաշալի մարդ եք դուք:

Հիմա արեք հակառակ գործընթացը. Ձեռքի ափով փակեք 1-ին և 2-րդ թերթիկները, նայեք 3-րդ և 4-րդ թերթիկներին: Ահավոր տեսարան: Այդպիսի մարդու հետ ոչ ոք չի կարող շփվել:

Նայեք ընդհանուր փեր թերթիկին: Չէ որ դուք նկարագրել եք հենց նույն հատկանիշները: Այդ ամենը դուք եք:Միայն թե երկու տարբեր տեսանկյուններից՝ ընկերոջ և թշնամու:

Եվ այսպիսով, որպեսզի դուրս գաք կոնֆլիկտային իրավիճակից փնտրեք փոխհամաձայնեցում այլ ոչ թե հաղթանակ:

Հանգիստ ամփոփեք պատճառները, որոնք առաջացնում են կոնֆլիկտներ: Հանգեք նրան, որպեսզի հասկանաք թե ինչն է հանգեցրել կոնֆլիկտի:

Հետևեք խոսքին: Օգտագործեք այնպիսի բառեր, որոնք բարձրացնում են մարդու անձը:

Մի օգտագործեք ՙմիշտ՚՚ և ՙերբեք՚՚ բառերը:Եղեք ճշտախոս և արեք դա բարությամբ: Երբեմն լավ է լռեք:

Հարձակվեք մարդու վրա այլ ոչ թե խնդրի: Մի խոսեք ոչ ոքի մասին, խոսեք ինքներդ ձեզանից: Ոչնչից մի վախեցեք:

Սրվեք էմոցիաներին, բայց թույլ մի տվեք որպեսզի նրանք իշխեն ձեզ: Մի կառչեք ձեր վախերից, մի նեղացեք:

Նահանջեք երբեմն. դա պարտություն չէ: Այլ դա հնարավորություն է տալիս շարունակել խոսակցությունը:

## Եզրակացություն

Կոնֆլիկտների լուծման համար շատ կարևոր է վերլուծել դիմացի մարդու կամ առհասարակ մարդկանց վարքի պատճառները: Սովորաբար կոնֆլիկտի վիճակում գտնվող մարդիկ կարծում են, որ կոնֆլիկտի մյուս կողմում գտնվող մարդը ցանկանում է իրենց վնասել: Սակայն մեծ հաշվով մարդիկ վարվում են այս կամ այն կերպ միայն իրենց ներքին մղումներից և իրենց սեփական խնդիրները լուծելու համար: Այսինքն՝ իրենց վարքը հիմնականում պայմանավորված է իրենց վախերով, անհանգստություններով, անլիարժեքության զգացմամբ և այլն: Կոնֆլիկտային իրավիճակներում շատ օգտակար է ռեալացնել սեփական ակնկալիքները: Երբ մենք զգալիորեն պակասեցնում ենք մեր ակնկալիքները, բնականաբար կոնֆլիկտի առիթը նույնպես նվազում է: Շատ կարևոր է վերլուծել մեր ակնկալիքների իրատեսականությունը: Կոնֆլիկտները լուծելուն շատ է օգնում այն գաղափարը, որ ճշմարտությունը տարբեր է: Այս իրավիճակին համապատասխան մի ասույթ կա. «Այս աշխարհում երեք ճշմարտություն կա՝ իմ

ճշմարտությունը, քո ճշմարտությունը և ճշմարտությունը»: Այս գիտակցումն օգնում է կոնֆլիկտային իրավիճակներում լինել ավելի հանդուրժող և ճկուն:

**Կոնֆլիկտի դրական եւ բացասական կողմերը:**

Դրական

Օգնում է խնդիրների, դրանց վերաբերյալ տեսանկյունների, լուծման տարբերակների բացահայտմանը:
Նպատսում է աշխատանքի արդյունավետության բարձրացմանը
Երբեմն կարող է միավորել կոլեկտիվը արտաքին ճնշման դեմ:
Բացասական

Բերում է կազմակերպության սոցիալ-հոգեբանաբան մթնոլորտի վատացմանը
Բարձրացնում է մարդկանց նյարդայնությունը, հանգեցնում է սթրեսների
Շատ մարդկանց շեղում է իրենց անմիջական ծառայողական պարտականությունների կատարումից:
Կոնֆլիկտի կառուցվածքը

Կոնֆլիկտի օբյեկտ
Կոնֆլիկտի մասնակիցները
Կոնֆլիկտային իրավիճակ
Միջադեպ:

Երբեմն կոնֆլիկտերը հանդես են գալիս նաև ագրեսիայի տեսքով:

**Կոնֆլիկտի կառավարում**

Արտահայտվելու հնարավորություն տալ ինչպես բարկությունը նվազեցնելու այնպես էլ իր տեսակետները արտահայտելու համար:

Դիմացինի հակակրանքը կամ ագրեսիան թուլացրեք անսպասելի քայլերով: (խորհուրդ հարցրեք, հարցերք նրան մի թեմայից, որը կարեւոր է նրա համար, հիշեցրեք ձեր ընթանրությունների մասին եւ անցյալի հետ կապի, կոմպլիմենտ արեք, ցավակցեք նրա կորուստներին)

Բացասական գնահատականներ մի տվեք, այլ խոսեք ձեր զգացմունքների մասին:

Դուք ինձ խաբել եք եւ ես ինձ զգում եմ խաբված

խնդրեք որ գործընկերը ներկայացնի սպասվելիք արդյունքը եւ հիմնախնդիրը: Զերծ մնացեք զգացմունքային դրսեւորումներից:

Մի վարկաբեկեք դիմացինին, հնարավորություն տվեք իրեն իր հեղինակությունը փրկել:

Գնահատեք նրա արարքները այլ ոչ թե իրեն՝ Դուք արդեն երկրորդ անգամն է ինչ չեք կատարել ձեր խոստումը, այլ ոչ թե դուք անպարտաչանաչ կամ ստախոս եք:

Յանգիստ եւ վստահ պահելակերպ, որը հավասարը-հավասարի ազդեցություն է թողնում:

Մի խուսափեք ներեղություն ասելուց, եթե զգում եք որ սխալվել եք:

Նախ դա զինաթափում է դիմացինին, հարգանք է առաջացնում, քանի որ ներեղություն ասելու ունակ են հիմնականում հասուն եւ վստահ մարդիկ:

Ոչինչ պետք չէ ապացուցել: Կոնֆլիկտային իրադրության մեջ մեկը մյուսին ոչինչ չի կարող ապացուցել:

Եթե այնուամենայնիվ դուք բռնկվել էք եւ սկսել արտահայտվել առավել կարեւոր բաներից է մնում պարզապես լռել, իհարե դիմացինի համար լռությունը չպետք է լինի վիրավորական:

Խոսիր այն ժամանակ երբ գործընկերը հանգստացել է
անկախ կոնֆլիկտի լուծումից հարաբերությունները մի փչացրեք:

1 Պետք է հստակ գիտակցել, որ մեր ցանկացած արտահայտությունը, որը ուղղված է կոնֆլիկտի էսկալացիային կարող է հանգեցնել կոնֆլիկտի:

2 Չարկավոր է պատկերացնել, թե ձեր ասվածը ինչպես կնդունվի դիմացինի կողմից

**Գրականության ցանկ**

https://shmariannamskh.wordpress.com
https://www.slideshare.net/torosian/ss-9876301
https://lib.armedu.am/